

<i>Համարը</i>	թիվ 1	<i>Տեսակը</i>	Մայր
<i>Տիպը</i>	Պաշտոնական պարգաբանում	<i>Կարգավիճակը</i>	Գործում է
<i>Մկզբնադրյալը</i>	ՀՀԳՏ 2006.04.01/9(218)	<i>Ընդունման վայրը</i>	Երևան
<i>Ընդունող մարմինը</i>	Տրանսպորտի և կապի սրար	<i>Ընդունման ամսաթիվը</i>	13.03.2006
<i>Ստորագրող մարմինը</i>	Տրանսպորտի և կապի սրար	<i>Ստորագրման ամսաթիվը</i>	13.03.2006
<i>Վավերացնող մարմինը</i>		<i>Վավերացման ամսաթիվը</i>	
<i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i>	11.04.2006	<i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i>	

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐ

13 մարտի 2006 թ.

թիվ 1

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«Փոստային կապի մասին» ՀՀ օրենքը կարգավորում է փոստային կապի բնագավառի հետ կապված հարաբերությունները, մասնավորապես, համաձայն օրենքի 1-ին հոդվածի, «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան է հանդիսանում Հայաստանի Հանրապետության տարածքում փոստային կապի բնագավառում գործունեության իրականացման իրավական հիմքերի, փոստային կապի գործունեության կարգավորմանն ուղղված պետական կառավարման մարմինների լիազորությունների, ինչպես նաև փոստային կապի գործունեությանը մասնակցող կամ փոստային կապի ծառայություններից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ու պարտականությունների սահմանումը:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայությունները հանդիսանում են կապի ոլորտի տարբեր գործունեության տեսակներ և էապես տարբերվում են միմյանցից:

Այսպիսով, «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքը չի կարգավորում սուրհանդակային կապի ծառայությունների հետ կապված հարաբերությունները:

Միաժամանակ, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի «Հայաստանի Հանրապետությունում վիճակագրության բնագավառում տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ ՏԳՏԴ-ի պարտադիր կիրառման հանգամանքը հաստատելու մասին» N 58 որոշման համաձայն «Կապ» խմբի «Փոստային և սուրհանդակային գործունեություն» ենթախմբի մեջ տարանջատվում է փոստային և սուրհանդակային ծառայությունները՝ որպես գործունեության առանձին տեսակներ:

Իսկ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 12-րդ մասին համապատասխան, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների պարգաբանումները տրվում են ՀՀ համապատասխան օրենքների և տնտեսական գործունեության ընդհանուր դասակարգիչների համաձայն:

Նկատի ունենալով վերը նշվածը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի դրույթներով, պաշտոնապես պարգաբանում եմ՝

«Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը չի տարածվում սուրհանդակային կապի ծառայությունների վրա և, հետևաբար, այն լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ չի համարվում:

**ՀՀ տրանսպորտի և կապի
նախարար՝**

Ա. Մանուկյան